ՄԱՅՐ ԱԹՈՌ

Անցեալ տարուայ դեկտ. վերջին Ազգիս Վեհափառ Հայրապետի յանկարծակի հիւանդութիւնը և հիւանդութեան անսպասելի ծանր կերպարանք ստանալը, բարեբաղդաբար ո՛չ մի հետևանք չունեցաւ Վեհափառ Հիւանդի առողջական վիճակի վերայ։ Թէև ապաքինումը քիչ աւելի երկար տևեց, քան ենթադրում էին բժիշկները, սակայն հետևանքը կատարելապէս գոհացուցիչ էր և ուրախութիւն ցրուած հօտի ամեն դասակարգի և խաւերի համար, որոնք ամենայն հոգածութեամբ անդադար հեռագրական տեղեկութիւններ էին խնդրում Հայրապետական Դիւանից Ն. Ս. Օծութեան առողջական վիճակի մասին։

Այսպիսի սիրառատ կապը իւր Հօտապետի հետ ո՛չ պակաս բուժիչ միջոց էր Հանրական Հօր համար, որի սիրտը աւելի ևս էր յուզւում իւր հոգևոր որդիների հոգեկան ներքին, անկեղծ վերաբերման հանդէպ և նոր ոյժ տալիս նորա մարմնին օր առաջ ոտքի կանգնելու և կրկին ամբողջովին նուիրելու իւր սիրեցեալ հօտի հոգսերին և հոգեկան կարիքներին։

* *
*

Բազմաթիւ են այն սրտայոյզ հեռագրերը, որոնք անդադար տեղում էին Հայրապետարան, Վեհափառ Հիւանդի առողջական վիճակի մասին տեղեկութիւններ խնդրելով, իսկ առաւել ևս բազմաթիւ այն հեռագրերը, որոնք իրար յետևից հասնում էին Ն. Սրբութեան ապաքինումն ու առողջական վիճակի լինելն իմանալուց յետոյ։ Ն. Սրբութեան մշտամռունչ աղօթքները և օրհնութիւնները էին վերապանում դէպի Բարձրեալը իւր հօտի ամէն դասի և կարգի համար։

Հեռագրական տեղեկութիւններ խնդրած էին Տփխիսի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոս, գնդապետ Սուրէնեան, Մայրապետ կոյս Թայիրեան, Տփխիսի առևտրականների Աւագը, Հայկ Տ. Միքէլեան, Սինօդի դատախազ պ. Մելիք-Օհանջանեան, որ ըստ պատուէրի փոխարքայի դիւանապետի միշտ տեղեկութիւններ էր հաղորդում Օգոստափառ Փոխարքայի Դիւանին՝ հիւանդութեան ընթացքի մասին՝ զեկուցանելու Ն. Կ. Բարձրութեան, «Մշակի» խմբագրութիւն, Տփխիսի հոգևորականութիւն, Տփխիսի մեշչանների աւագ պ. Առաքելեան, Ատրպատականի առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոս, Նոր-Նախիջևանի փոխանորդ և հասարակութիւն, Հ. Նախիջևանի փոխանորդ, Աղէքսանդրապոլի փոխանորդ, Կովկասեան Բարեգործական Ընկերութեան նախագահ պ. Ս. Ցարուբիւնեան, Պետական դումայի անդամ պ. Մ. Պապաջանեան, Տիգրան Նազարեան, Պետրոգրադի հայ հասարակութեան կողմից, պ. Ա. Ասրիրէդեան, Սիւնեաց փոխանորդ, Տ. Ցուսիկ արքեպիսկոպոս Տփխիսից, Տիգրան Բէկզադեան Բագուից, Ատրպատականի առաջնորդ, Երևանի փոխ-թեմակալը, որ Վ.ԵՀի յատուկ բժշկի հետ եկան, և այլն, և այլն»։

* *
*

Ն. Սրբութիւնը չնայած իւր ոչ-կատարելապէս ապաքինման, այնուամենայնիւ անկարող եղաւ յունուարի 6-ին, Փրկչի Մկրտութեան Տօնին Տաճար չիջնել։ Ներկայ եղաւ ամբողջ ժամերգութեան և Մկրտութեան կարգին, որ կատարուեցաւ Մ. Տաճարի մէջ։ Պատարագիչն էր գեր. Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազեան։

Պատարագից յետոյ գուրսը ժողովուած բազմութիւնը լռելեայն, ակնածութեամբ դէպի իւր Հայրապետը, իւր ուրախակցութիւնն էր յայտնում Ն. Սրբութեան ապաքինման համար։

* *
*

Յունուարի 15-ին հեռագրով Տ. Մեսրովբ եպիսկոպոսը յայտնում էր Ն. Ս. Օծութեան, որ նախորդ գիշերը, իւր Ալուպկայի կալուածքում, վախճանուել է Կովկասեան նախկին-փոխարքայ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը։

Ն. Վեհափառութեան կողմից հանգուցեալ Կոմսի այրուն, կոմսուհի Ելիսաւետա Անդրէևնային ուղղուեցաւ հետևեալ հեռագիրը.

«Ալուպկա, Նորին Պայծառափայլութեան ստատս-Տիկին Կոմսուհի Ելիսաւետա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովային.

«Բարեպաշտ Կոմսուհի, խորապէս վշտացած եմ ականաւոր, մարդասէր, զգօն պետական գործչի և օրինակելի քրիստոնէի՝ անմոռաց Կոմս Իլլարիօն Իվանովիչի մահուամբ։ Խնդրեմ ընդունել, Պայծառափայլ Իշխանուհի, իմ անկեղծ և խորին վշտի հաւաստիքը Ձեզ հասած անփոխարինելի կորստի նկատմամբ։ Աղօթում եմ առ Ամենաբարձրեալն հանգիստ պարգևելու Ձեր թանկագին ամուսնու մաքուր հոգուն և իւր մխիթարիչ ս. Հոգին առաքել մխիթարութիւն Ձեզ և Ձեր վշտադնեալ գերդաստանին։

ԳԷՈՐԳ Ե.

Կաթողիկոս Ամենայն Հայոց»

Որին ի պատասխան կոմսուհուց ստացուեցաւ հետևեալ հեռագիրը։

«Նորին Սրբութեան Կաթուղիկոսին Ամենայն Հայոց.

«Խնդրում եմ Ձերդ Վեհափառութիւնից ընդունել իմ սրտագին շնորհակալութիւնս այն ջերմ վերաբերութեան համար, որ ունեցաք դէպի ամուսնուս յիշատակը և մեր խորին վշտի նկատմամբ։ Ինձ և զաւակներիս յանձնում եմ Ձեր աղօթից։

Կոմսուհի Ելիսաւէտա

Վորոնցովա-Դաշկովա»

Հանգուցեալ կոմսի մարմինը տեղափոխուած լինելով Ալուպկայից՝ իւր հայրենի կալուածքում և տոհմական դամ-

բարանում թաղուելու, յունուար 23-ին, Նորին Սրբութեան առանձին կարգադրութեամբ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեցաւ Մ. Տաճարում, ամբողջ միաբանութեան ներկայութեամբ։

* *
*

«Արարատ»ի խմբագրի մահուամբ Թերթիս խմբագրութեան հոգածութիւնը ժամանակաւորապէս յանձնուեցաւ Դիւանապետ Տ. Տիրայր վարդապետին։

* *

Մ. Աթոռի Հոգևոր Ճեմարանի բացումը այս տարի անակնկալների և աննպաստ պայմանների շնորհիւ, հակառակ Ճեմարանի Վարչութեան ջանքերին և ջերմ ցանկութեան՝ անհնար դարձաւ։

Ճեմարանի Վարչութիւնը յոյս ունէր, որ իւր սկզբունական նպատակը — այն է դասաւանդութիւնը վերսկսել գոնէ նոյեմբերի 1-ից — կարող կլինի իրագործել, սակայն անցաւ և դեկտեմբեր ամիսը և Ճեմարանի բացումը յապաղեց, քանի որ ամառուանից Նորա շէնքն ամբողջապէս հիւանդանոցի վերածուելով, անկարելի էր լինում շտապեցնել Նոր-Վեհարան փոխադրելը այնտեղ գտնուած հիւանդանոցը։ Նոր-Վեհարանը հիւանդանոցի վերածելու գործը ընթանում էր շատ դանդաղ, շնորհիւ տեղական հանգամանքների, տեխնիքական միջոցների պակասութեան։

Այդ բոլորի վերայ աւելացաւ նաև մի ծանր հանգամանք։ Դեկտեմբերից սկսած Էջմիածնում սկսուեցաւ ծանր կերպարանք ստացած, սուր վարակիչ հիւանդութիւնների մի շրջան. մանաւանդ բծաւոր տիֆը իւր սպառնացող ներկայութեամբ Ճեմարանի Վարչութեանն ստիպում էր շատ զգուշաւոր լինել իւր ոաներին կատարելապէս վարակուած մի վայր բերելու և նոցա կեանքը պատահարների ու վտանգի ենթարկելու խնդրի նկատմամբ։ Այդ ծանր

պատասխանատուութեան խնդիրը, ձեմարանի ուսման ընթացքն սկսելու իւր ջերմ ցանկութիւնը Վարչութեան առաջ մի ծանր երկուութեան խնդիր էին դրել, մանաւանդ որ բժիշկների կարծիքը բոլորովին հակառակն էր պնդում։

Ուստի կարևոր համարուեցաւ պաշտօնական բժշկական խորհուրդ նշանակել տեղական հիւանդանոցների բոլոր բժիշկների, անցեալ դեկտեմբեր 19-ին, որ եկաւ հետևեալ եզրակացութեան.

«Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ բծաւոր տիֆը նոյեմբերի կիսից սկսած սուր կերպարանք և համաճարակի բնաւորութիւն է ստանում,

«Որ վարակուած վայրերում այժմ յոյս չկայ, թէ կարող է դադարել այն,

«Որ ոչ մի հնարաւորութիւն չկայ ձեմարանի սաներին միանգամայն զերծ պահել ազգաբնակութեան հետ ունենալիք որևէ շփումից և հաղորդակցութիւնից,

«Որ ձեմարանն ու նորա յարակից շէնքերը հնարաւոր չէ շուտով պարապմունքների և ապրելու համար անվտանգ դարձնել։

«Որ անմիջապէս դարման հետ միասին հնարաւոր են և այլ հիւանդութիւնների (խոլերայի, դիզէնտերիայի և այլն) առաջանալը,

«Խորհուրդը դալիս է այն եզրակացութեան, թէ առաջիկայ կիսամեակում ձեմարանում պարապմունքներ չպէտք է սկսուեն, քանի որ աշակերտների վարակման վտանգն այս դէպքում հաստատ պիտի համարել։

Եւ իրօք բծաւոր տիֆի համաճարակի բնոյթը ոչ միայն չէր մեղմանում, այլ ընդհակառակն աւելի ու աւելի սուր կերպարանք և ծաւալումն էր ստանում. դորա հետ և դեռ ևս ձեմարանի ստորին յարկն ամբողջապէս հիւանդանոցի էր ծառայում և շէնքը վերջնական ախտահանութեան ենթարկելու խնդիրը անլուծելի մնում։

Ուստի և ձեմարանի Վարչութիւնն այդ էական հարցի վերջնական կարգադրութիւնը Նորին Սրբութեան հաճութեան թողնելով, Վեհ. Հայրապետն ի նկատի ունենա-

լով բժշկական խորհրդի եզրակացութիւնը և ձեմարանի սաներին անակնկալների շնորհիւ սպառնացող կենսական վտանգը, պատուիրեց ձեմարանի Վարչութեան չբանալ ձեմարանն երկրորդ կիսամեակում և այդ մասին կարևոր կարգադրութիւններ անել՝ աշակերտութեանն իմաց տալով այդ որոշումը։

* *
*

Մայր Աթոռի հովանաւորութեան տակ գտնուող Հիւանդանոցների վիճակն ամէն հնար եղածին չափով բարւոք և խնամոտ դրութեան է հասցրած։ Բժիշկների, քոյրերի և օգնականների բոլոր ջանքն էր ըստ կարելւոյն աշխատել երևացած, համաճարակի բնոյթ ստացած, սուր հիւանդութիւնները վարակող լինելու հանգամանքից հանել։ Այդ նպատակով ամենայն օր բժիշկների մի առանձին խումբ մտնում էր նոյն իսկ մասնաւոր տներ և վարակուածներին և կամ նոյն իսկ կասկածելիներին հանում, զետեղում հիւանդանոցներում և խնամոտ հոգածութիւն ունենում՝ մահացութեան առաջը կտրելու համար։

Բժշկական այդ անդուլ ջանքերն իրենց հետևանքներն ունեցան և վարակիչ հիւանդութիւնները հետզհետէ կորցրին իրենց սուր և վտանգաւոր բնոյթը, հիւանդութեան վայրերը կղզիացան և հիւանդացողների քանակն զգալի չափով պակասեց։ Պակասեց դորա հետ և մահացութեան տոկոսը։

Հիւանդանոցների թուական վիճակը յունուար ամսուայ ընթացքում հետևեալն էր.

ա) Հիւանդանոցների թիւը . . .	4
բ) Պարտաւորիչ մահիճների թիւը . .	400
գ) Հիւանդներ առ 1-ն յունուարի 1916 թ.	258
դ) Նոր մտած հիւանդներ . . .	407
ե) Հիւանդանոցից ելած առողջներ . .	329

զ) Մահացութեան դէպքեր . . . 41
է) Հիւանդների ընդունելութիւն . . 2259

Բնաւոր տիֆով վարակուածներ յունուար ամսի ընթացքում եղած են,—

ա) Նոր հիւանդներ 139
բ) Առողջացածներ 128
գ) Մահացութեան դէպքեր . . . 8

Փետրուար ամսի ընթացքում

ա) Հիւանդներ առ 1-ն փետրուարի . 315
բ) Նոր հիւանդներ 434
գ) Առողջացածներ 339
դ) Մահացութեան դէպքեր . . . 39
ե) Փոխադրուած այլ հիւանդանոցներ . 46

Բնաւոր տիֆով վարակուածներ փետրուար ամսի ընթացքում եղած են,—

ա) Հիւանդներ առ 1-ն փետրուարի . . 81
բ) Նոր հիւանդներ 104
գ) Առողջացածներ 104
դ) Մահացութեան դէպքեր 16
ե) Փոխադրուած միւս հիւանդանոցները . . 7

Սուբ-վարակիչ հիւանդութիւններ փետրուար ամսի ընթացքում եղած են,—

ա) Հիւանդներ առ 1-ն փետրուարի . . 18
բ) Նոր հիւանդներ 19
գ) Առողջացածներ 14
դ) Մահացութեան դէպքեր . . . 4
ե) Փոխադրուած միւս հիւանդանոցները . 4

* *
*

Որբերի խնամակալութիւնը Յունուար ամսից սկսած նոր շրջանի մէջ մտաւ։ Տալով այնպիսի անակնուելի մի մեծ զոհ, ինչպէս Որբանոցի դեկավարի, Տ. Բարգէն վարդապետի մահն էր, որ տեղի ունեցաւ տար. Յունուար 3-ին, աչքի առաջ ունենալով այնպիսի մի կենդանի վըտանգի օրինակ, ինչպիսին էր մահուան ճիրաններից հազիւ ազատուած Որբանոցի կառավարչուհի օր. Թումալախեանը և որբերից շատ շատերի հիւանդանալը և բարեբաղդաբար ոչ մի զոհ չտալը—Որբանոցի նոր վարչութիւնը ամեն ջանք գործ դրեց Որբանոցից դուրս վռնդելու համաճարակի բնոյթ ստացած բծաւոր տիֆը։

Հին Որբանոցը, ինչպէս գիւղում եղածը, փոխադրըուեցան ճեմարանի ննջարանները, փոքրերին բաժանելով ըստ սեռերի և իւրաքանչիւրին յատկացնելով մի-մի մեծ ընդարձակ, լոյս և օդառատ ննջարան. կազմուեցաւ առանձին սեղանատուն Նոր-Մանկավարժական թանգարանում ի նկատի ունենալով սնունդի խնդիրը՝ կազմուեցաւ առանձին խոհանոց իւր բոլոր պարագաներով, Քաղաքների Միութեան օժանդակութեամբ, որտեղից ստացւում է և՛ շատ աւելի սննդատու և շատ աւելի մեծ քանակութեամբ սնունդ, քան նախկին «Բաժիններ դնելու» կարգով, որ և մեծ ծախքեր էր կորզում Եղբ. Օգնութիւնից։

Որբանոցի Վարչութիւնը չափազանց կարևորութիւն տուեց բժշկական-առողջապահիկ վիճակին և մաքրութեան խիստ հսկողութեան, որով և իսպառ վերացան բծաւոր տիֆի դէպքերը Որբանոցից։

Նոր Վարչութիւնը յունուարից սկսած հոդաց և որբերի մտաւորի մասին, բանալով ճեմարանի վարժոցը նոցա համար, ուր դասախօսում են ճեմարանի ուսուցիչները, Որբանոցի կառավարչուհին, օրն երկու անգամ՝ փոխ ընդ փոխ դասաւանդութեամբ, առաւօտները մի մասի և ճաշից յետոյ միւս մասի համար։

* *
*

Ամերիկայի Նիւ-Ջէրսիի «Հայ որբանոցամ Ընկերութիւնը», որ իւր առանձին որբանոցների ցանցն էր պահում Տաճկահայաստանի զանազան վայրերում, — Տիգրանակերտ, Ակն, Վան, Խարբերդ, Ուրֆա, Զէյթուն, Մարաշ, Ամասիա, Մուշ, Ադանա և այլն, — դիմելով Վ.Եհ. Հայրապետին և ուղարկելով 4545 ռուբ. դրամ, խնդրել էր Մ. Աթոռի խընամքը վայելող որբերից ջոկել 30 որբ, երկու սեռից հաւասարապէս և պահպանել իրենց անունով։

Վ.Եհ. Հայրապետի կարգադրութեամբ այժմ այդ 30 որբերը տեղաւորուած են գիւղում առանձին բնակարանում և առանձին հսկող-վարժուհու ղեկավարութեամբ պատսպարւում են և կրթւում։

Ցանկալի էր, որ հեռաւոր Ամերիկահայերի բարի օրինակին հետևէին և միւսները և համայնքների միջոցներով, իրենց անունով պահպանէին մի-մի Որբանոց, կորստից ազատելու այն բազմաթիւ անոք մանուկներին, որոնք ամենայն օր դուռ են բաղխում։

* *
*

Փետրուար 3-ին Վրաստանի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, յանուն Նորին Սրբութեան տուած հեռագիրը, «Ամենամեծ խնդակցութեամբ յայտնում եմ, որ Կարինն առնուած է», ուրախութեամբ լցրեց Վ.Եհ. Հայրապետի սիրտը, որ վերջապէս Տաճկական Հայաստանի կուռ ամրութեան՝ Կարինի նուաճմամբ բացւում է իւր տարաբաղդ որդիների ազատագրութեան նոր շրջանը։

Այդ պատճառով և կարգադրուեցաւ, որ հետևեալ օրը գոհացողական մաղթանք կատարուի Մ. Տաճարում և հեռագրուեցաւ բոլոր առաջնորդներին նոյնպիսի մաղթանքներ կատարել տալ իրենց թեմերի բոլոր եկեղեցիներում Ռուս քաջարի զօրքի և զէնքի յաջողութեան և յաղթական յառաջրնթացման համար։

Մաղթանքին, Մ. Տաճարում, ներկայ էր Ն. Սրբու-

թիւնը, շրջապատուած ամբողջ միաբանական ուխտով։ Հանդիսադիրն էր Տ. Բագրատ եպիսկոպոսը։

Մաղթանքից յետոյ ժողովուրդը կեցցէների և ուրախական գոչերի տարափի տակ առաջնորդեց ծերունազարդ Հայրապետին իւր բնակարանը, որը տեղի տալով ժողովրդի ոգևորուած, ուրախութեան արտայայտութիւններին, պարտիզում պատշգամբից իւր խնդակցութիւնը յայտնելով օրհնեց ռուսաց բանակի Օգոստափառ ընդհանուր Ղեկավարին, կարողութիւն մաղթելով Կովկասեան զօրքերի Օգոստափառ զօրաց-հրամանատարին, անվեհեր զօրապետներին և քաջարի զօրքերին, յոյս ներշնչելով իւր հօտին, որ ռուսական զէնքի յաջողութեան իւրաքանչիւր մի նոր քայլ, նոցա ազատագրութեան շրջանի մի նոր քայլ է։

* *
*

Վեհ. Հայրապետը կամենալով հաստատուն տեղեկութիւն ունենալ անմիջական աղբիւրներից իւր, Կարնում և շրջակայքում գտնուած, հօտի դրութեան և քանակի մասին հեռագրեց Կարինի բերդապահին հաղորդել, թէ ինչ դրութեան մէջ է իւր հօտը քաղաքում, շրջակայքում, ո՞րչափ է մօտաւորապէս կենդանի մնացածների քանակը, ո՞վ է հոգևորական ներկայացուցիչն այժմ և ո՞ւր է առաջնորդը։

* *
*

Կարնոյ առման առթիւ բազմաթիւ հեռագրեր են ստացուած, յանուն Վեհ. Հայրապետի, որոնց մէջ իրենց խնդակցութիւնն ու շնորհաւորութիւններն է արտայայտում զանազան վայրերի հայութիւնը, սկսած Ամերիկայից, Մանչեստրից, Միլանից, Խարբինից ու Վլադիվոստոկից, մինչև ամենամօտ վայրերի անհատներ ու համայնքներ, իրենց հոգևոր ներկայացուցիչների և առաջնորդների հետ։

* *
*

Վ.Եկ. Հայրապետն, իբրև պատուական Հոգաբարձու Սանասարեան վարժարանի դիմելով Կովկասեան Տ. Փոխարքային իրաւունք խնդրեց Կարին ուղարկելու Սանասարեան վարժարանի տեսուչ Գ. Արուլեանին և նոյն վարժարանի ուսուցիչ Ս. Խաչատրեանին, հոգածութիւն ունենալու նորա ստացուածքի մասին։ Այդ միջնորդութիւնն յարգուելով պ. պ. Արուլեան և Խաչատրեան մեկնեցին Կարին փետրուար 17-ին։

* *
*

Փետրուար 21-ին Ազգիս Վ.Եկ. Հայրապետը բարեհաճեց բժիշկների խորհրդի համաձայն, Երևան մեկնել իբր զբօսանք, ուր երկու օր մնալով վերադարձաւ Մ. Աթոռ։

Նորին Վեհափառութեան ուղեկցում էր Հայրապետական Դիւանապետ Տ. Տիրայր վարդապետ։

* *
*

Փետրուար 24-ին Էջմիածին եկաւ գաղթականութեան գործերի պետական լիազօր գեներալ Թամաշեանը, իւր օգնական Լ. Գ. Եւանգուլեանի հետ։ Ն. Ս. Օծութիւնը բարեհաճեց առանձին ունկնդրութիւն շնորհել Ն. Գերազանցութեան և իւր ուղեկցին։

Ապա դիտեցին տեղական բոլոր հիւանդանոցները, Որբանոցը, որից շատ գոհ մնաց այնտեղ տիրող օրինակելի մաքրութեան և կարգաւորութեան համար։

* *
*

Գիտութեանց ճեմարանի միջնորդութեամբ և յանձնարարութեամբ և Կովկասեան Տ. Փոխարքայի թոյլտուութեամբ Վան և նորա շրջակայքը գիտական նպատակով գնացած Կովկասեան (Տփխիսի) թանգարանի աւագ-հսկիչ Սրմբատ Վ. Տէր Աւետիսեանը վերադառնալով իւր ճանապարհորդութիւնից, բերեց և ազգիս Վ.Եկ. Հայրապետի առան-

ձին յանձնարարութեամբ Վանի և շրջակայ վանքերից ու եկեղեցիներից ժողոված ձեռագրերը, թուով 1082 հատ, մեծ ու փոքր, որոնք յանձնուեցան ի պահ Մ. Աթոռի մատենադարանը։

Այդ գործի մէջ աջակից են եղած նորան նաև Լիմ անապատի վանահայր Տ. Յովհաննէս վարդապետ Հիւսեան։ Իսկ գործի ամբողջ ծանրութիւնը ընկած էր պ. Տէր Աւետիսեանի վրայ, թէ ժողովելու և դասաւորելու, թէ փոխադրելու և թէ ոտհմանն անցնելու ժամանակ, որի համար առանձին միջնորդութիւն էր արել Կովկասեան Տ. Փոխարքային և որ իւր բարեհաճ արտօնութիւն էր շնորհել։

Բերուած են ձեռագրեր

1) Աղթամարից	84	հատ
2) Վանից, Այգեստանից	172	»
3) Կտուց անապատից	187	»
4) Լիմ »	281	»
5) Վարագայ վանքից	357	»
Ընդամենը	1082	»

Նախորդ շրջանում ստացած Ձեռագրերի քանակն է

1) Աղթամարից	201	հատ
2) Վանից և շրջակայքից	61	»
3) Լիմ անապատից	22	»
Ընդամենը	284	»

Այսպիսով Վանի շրջանից մինչև այժմ ազատուած է շնորհիւ Հայրապետարանի ձեռք առած միջոցների և հոգածութեան մի հազար երեք հարիւր քսան և վեց (1326) ձեռագիր, որոնց ցուցակն ըստ հնարաւորութեան կը տպագրուի «Արարատի» էջերում։

* * *

Մեծի պահոց կիւրակէներին գիւղի եկեղեցում ժողովրդին հոգևոր մխիթարութիւն տալու համար, քարոզիչներ նշանակուեցան Ն. Ս. Օծութեան կողմից Տ. Աշոտ եպիսկոպոս, Տ. Գարեգին վարդապետ, Տ. Ներսէս վարդապետ, և Տ. Ղևոնդ վարդապետ Մարդուկիսեան։

Տ. ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ներկայ թուականի յունուարի 3-ին բծաւոր տիֆից մեռաւ մեր միաբանութեան աչքի ընկնող անդամներից մէկը՝ Սինոդի անդամ՝ Տ. Բաբգէն վարդապետը։

Նա ծնուել է 1869 թ. հոկտեմբեր 10-ին Շուշի քաղաքում։ Մանկութեան ուսումն ստացել է մայրենի քաղաքում և ապա աւարտել Մ. Աթոռի Հոգևոր ճեմարանը 1895 թուին։ Դեռ ևս վերջին լսարանում 1894 թ. դեկտեմբերի 17-ին նա ընդունուել էր Էջմիածնի միաբանութեան շարքը։ Ուսումը ճեմարանում աւարտելուց յետոյ՝ 1895 թ. ճեմարանի տնտես է նշանակուում, իսկ սեպտեմբերին Վաղարշապատի ծխական օրիորդաց դպրոցում կրօնուսոյց։ 1896 թ. նշանակուում է Տպարանական ժողովի անդամ-գանձապահ, հրաժարուելով ճեմարանի տնտեսութեան պաշտօնից։ 1897 թ. նոյեմբերի 30-ին Տ. Սուքիաս եպիսկոպոսի ձեռքով աբեղայ է ձեռնադրուում, իսկ յունիսի 18-ին վարդապետական աստիճան է ստանում։ Նոյն թուի նոյեմբերի 8-ին ուղարկուում է Խարկով կատարագործուելու իրաւաբանական գիտութիւնների մէջ, երեք տարի իբրև ազատ ունկնդիր յաճախելով համալսարան։ Հանգուցեալ Տ. Մկրտիչ կաթուղիկոսի կոնդակով 1902-ին նշանակուում է Ախալցխայի փոխանորդ, որտեղից ապա փո-